



Քաղաքացիական կրթության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք առաջադրանքների հրահանգներին, ճիշտ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև պատասխանեք հարցերին:

Թեստի առավելագույն միավորն է՝ 55

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ

Մաղթում ենք հաջողություն:



Հրահանգ

➤ Առաջադրանք՝ ընտրովի պատասխաններով (№1-12, 19.1, 23.1, 23.2)

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Պատասխանների թերթիկի վրա, ճիշտ պատասխանի համապատասխան վանդակում, դրեք **X** նշանը: Ոչ մի այլ նշում չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել նշված պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, ուր դրել եք **X** նշանը, որից հետո միայն նշեք պատասխանի նոր տարբերակը: Ուղղած պատասխանը կրկին անգամ հնարավոր չէ ընտրել: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

- (1) 1. Համաձայն Վրաստանի քաղաքացիության մասին օրենքի՝ Վրաստանի քաղաքացիություն ստացած անձը հավատարմության երդում է տալիս: Ո՞ր պարտավորությունը սահմանված չէ տվյալ երդմամբ:
- ա) Սահմանադրության և մյուս բոլոր օրենքների պահպանումը:
 - բ) Պետական կրոնի ճանաչումն ու հարգանքը:
 - գ) Հարգանքը ազգային ավանդույթների և մշակույթի նկատմամբ:
 - դ) Անկախության և տարածքային ամբողջականության պահպանումը:

(1) 2. Տնտեսական լիբերալիզմի հեռանկարից ո՞ր սկզբունքները չեն հանդիսանում բարօրության աղբյուր:

ա) Կենտրոնացում և խիստ կանոնակարգեր:

Ֆ) Աշխատանքի բաշխումը և մասնագիտացումը:

ժ) Ձգտումը դեպի շահույթն ու սեփականությունը:

զ) Ազատ առևտուրը և մրցակցությունը:

(1) 3. Քաղաքական ազգայնականության ո՞ր ձևն է առանձնանում ազրեսիվ իմպերիալիստական նկրտումներով, մերժում հավասար իրավունքների և ազգերի ինքնորոշման սկզբունքը:

ս) Հակազաղութային ազգայնականությունը:

ծ) Պահպանողական ազգայնականությունը:

ճ) Ազատական ազգայնականությունը:

Պ) Էքսպանսիվ ազգայնականությունը:

(1) 4. Գոյություն ունեն ժողովրդավարության տարբեր մոդելներ: Որո՞նք են «ժողովրդական ժողովրդավարության» մոդելի հիմնական բնութագրիչները:

ա) Քաղաք-պետությունների ընդհանուր ժողովի ընթացքում քաղաքացիների կողմից անմիջական քվեարկության միջոցով կայացնել կարևոր որոշումներ:

ծ) Բարձրացնել հասարակական կյանքում քաղաքացիական ընդգրկվածության աստիճանը և նպաստել քաղաքական բազմակարծությանը պետական մակարդակով:

ժ) Բաշխել իշխանությունը դասակարգերի միջև, որի հիմնական նպատակն է ընդհանուր սեփականության միջոցով հասնել սոցիալ-տնտեսական հավասարության:

զ) Ապահովել քաղաքացիների իրավունքների և ազատությունների պահպանումը և ճանաչել անձի պատասխանատվությունն իր սեփական սոցիոմշակութային վիճակի նկատմամբ:

- (1) **5. Աշխատաշուկայում ակտիվորեն աշխատանք փնտրողների մասնաբաժինը նվազում է, երբ՝**
- ա) աշխատուժի թիվը նվազում է, մինչդեռ աշխատողների թիվը՝ ավելանում,
 - ბ) աշխատուժի թիվն ավելանում է, մինչդեռ աշխատողների թիվը՝ նվազում,
 - գ) աշխատողների թիվը մնում է անփոփոխ, մինչդեռ աշխատուժի թիվն ավելանում է,
 - դ) աշխատուժի թիվը մնում է անփոփոխ, մինչդեռ աշխատողների թիվը նվազում է:

(1) **6. Կոնֆլիկտային իրավիճակում մրցակցային վարքագծի մոդելի կիրառումը նպատակահարմար է, երբ.**


ա) Կողմերի միջև իշխանությունը հավասար է և անհապաղ պետք է կայացնել որոշում: Նման դեպքում երկու կողմերն էլ չափավոր կերպով պաշտպանում են իրենց շահերը, և կողմերից ոչ մեկի շահերը լիարժեք կերպով չեն բավարարվում:

Ց) Ի տարբերություն երկրորդ կողմի դուրք ունեք ոչ բավարար չափով իշխանություն, միևնույն ժամանակ խնդիրն ավելի պակաս կարևոր է ձեզ համար և ցանկանում եք ժամանակ շահել: Նման դեպքում անտեսվում են երկու կողմերի շահերը:

ճ) Երկրորդ կողմն ունի ավելի մեծ իշխանություն, ձեզ համար կարևոր է հարաբերությունների պահպանումը, մինչդեռ մյուս կողմի համար առավել կարևոր է արդյունքը: Նման դեպքում երկրորդ կողմի շահերը բավարարվում են սեփական շահերի հաշվին:

դ) Ի տարբերություն մյուս կողմի դուրք ունեք ավելի մեծ իշխանություն, իրավիճակը կրիտիկական է, և արդյունքը շատ կարևոր է ձեզ համար: Նման դեպքում ուշադրություն է դարձվում միայն սեփական շահերի բավարարմանը, իսկ մյուս կողմի շահերն անտեսվում են:

(1) 7. Առաջադրանքում տրված կոնցեպտուալ սխեմայում ներկայացված են ցուցիչներ: Ի՞նչ պետք է գրված լինի հարցական նշանի փոխարեն:



(1) **8. Ո՞ր քաղաքական մտածողին է պատկանում ներկայացված մեջբերումը:**

«Յուրաքանչյուր պետությունում երեք տեսակի իշխանություն է՝ օրենսդիր իշխանություն, միջազգային իրավունքից կախված գործերի գործադիր իշխանություն և քաղաքացիական իրավունքից կախված գործերի իշխանություն: Առաջինի ուժով միապետը կամ մագիստրատը ընդունում է ժամանակավոր կամ մշտական օրենքներ և փոփոխում կամ չեղյալ հայտարարում գործող օրենքները: Երկրորդի ուժով նա խաղաղություն կամ պատերազմ է հայտարարում, ուղարկում է կամ ընդունում դեսպաններ, ապահովում անվտանգություն, կանխարգելում ներխուժումները պետություն: Երրորդի ուժով նա պատժում է հանցագործներին կամ դատում մասնավոր անձնաց վեճերը: Վերջինս կարելի է անվանել դատական իշխանություն, իսկ երկրորդը՝ պարզապես պետության գործադիր իշխանություն:

ա) Թոմաս Հոֆսին:

ծ) Արիստոտելին:

զ) Նիկոլո Մաքիավելիին:

զ) Շառլ Լուի դը Մոնտեսքյոյին:

(1) **9. Ո՞ր հիմնավորումն է ճիշտ փոխանցում փաստի և կարծիքի իմաստը:**

Տ) Փաստը հնարավոր է ստուգել և հաստատել համեմատելով այն իրականության հետ՝ հիմնվելով ռացիոնալ դատողության վրա, մինչդեռ կարծիքն անհատի կողմից այս կամ այն փաստի սուբյեկտիվ գնահատականն է: Օրինակ, փաստ կարող է լինել սպորտային մրցույթին մասնակցությունը, թեև մարդն այդ փաստը կարող է գնահատել կամ դրական կամ բացասական, ինչը նրա սուբյեկտիվ կարծիքն է:

Ծ) Փաստն իրականության այն նկարագիրն է, որը վավերական է միայն այն դեպքում, եթե այն հիմնավորված է գիտականորեն և կարող է արտահայտվել մարդկային լեզվով, իսկ կարծիքները մարդուն մղում են ըմբռնելու այդ փաստը և հանգելու օբյեկտիվ եզրակացության: Օրինակ՝ իրականությունն օբյեկտիվորեն տեսնելու համար մարդը պետք է ծանոթանա գոյություն ունեցող բոլոր կարծիքներին և գնահատի տվյալները՝ ըստ իր պատկերացումների:

Ճ) Կարծիքը միշտ սուբյեկտիվ տրվածություն է, որը հաճախ մարդկանց դրդում է սխալ որոշումներ կայացնել, այն դեպքում երբ փաստերը բոլորովին այլ բանի մասին են խոսում և միշտ օգնում են մարդուն ճիշտ կառավարել իր կյանքը: Օրինակ, երբ մարդը կարծում է, որ իր բացասական կարծիքը ներկայիս քաղաքական ռեժիմի մասին ճիշտ է, փաստը միշտ հակառակն է ցույց տալիս, և արդյունքն էլ միշտ դրական է:

Ծ) Կարծիքի և փաստի միջև մեծ տարբերությունն չկա, քանի որ յուրաքանչյուր փաստ հիմնված է մարդու սուբյեկտիվ գնահատականի վրա, որը կարող է բխել սխալ պատկերացումներից: Օրինակ, մարդիկ հաճախ շփոթում են փաստն ու կարծիքը, երբ ասում են, որ առանձին քաղաքացիները չեն կարող ազդեցություն գործել ընտրությունների վրա, քանի որ մեկ անձի ձայնը վճռորոշ դեր չի խաղում վերջնական արդյունքի վրա:

(1) **10. Ո՞ր հիմնավորումն է ճիշտ արտահայտում գանգվածային լրատվության միջոցների քաղաքական կարևորության մասին բազմակարծության մոդելի տեսությունը:**

Տ) Լրատվամիջոցները հիմնականում պաշտպանում են տնտեսաապես ուժեղ սոցիալական շերտի շահերը և նպաստում կապիտալիստական հեգեմոնիայի ամրապնդմանը, որն արտահայտվում է բուրժուական գաղափարների քարոզչությամբ և հանրությանը ամբողջովին կողմնակալ քաղաքական հայացքի տրամադրմամբ:

Ծ) Լրատվամիջոցներն իրենցից նախ և առաջ բիզնես են ներկայացնում և ամբողջությամբ կենտրոնացած են շահույթի վրա: Դրանք իրականացնում են հասարակական տրամադրություններն արտացոլելու գործառույթ, անհրաժեշտություն չեն համարում քաղաքական գործընթացներին մասնակցելը կամ որևէ քաղաքական հայացքի հանդեպ կանխակալությունը:

Ց) Լրատվամիջոցների դերը հիմնականում հանրությանը տեղեկացնելու մեջ է կայանում: Լրատվամիջոցներն անաչառ կերպով ներկայացնում են երկրում առկա քաղաքական հայացքների լայն շրջանակը և փորձում հավասարակշռել հասարակության տարբերվող ուժերին:

Ծ) Լրատվամիջոցները գործիք են քաղաքականապես կողմնակալ էլիտար խմբերի ձեռքում, որոնք լուսաբանում են քաղաքական հայացքների նեղ շրջանակը: Նրա կանխակալ քաղաքական գործունեությունը արտացոլում է այն խմբի արժեքները, որը մեծամասնությամբ ներկայացված է լրատվամիջոցներում աշխատող մասնագետների շրջանում:

(1) 11. Ինֆոգրաֆիկայում արտացոլված են Սաքստատի (Վրաստանի ազգային վիճակագրական ծառայություն) 2022 թվականի տվյալները՝ «Վրաստանում սոցիալական պաշտպանության հիմնական ցուցանիշների» մասին:



Տվյալների հիման վրա արված n^o ը եզրակացությունն է ճիշտ:

- Տ) Կենսաթոշակառուների թվաքանակն ամենացածրն է Ռաչա-Լեչխումում և Քվեմո Սվանեթիում, քանի որ այնտեղ կենսաթոշակային տարիքը ամենաբարձրն է:
- Ծ) Թբիլիսիում կենսաթոշակառուների տոկոսային ցուցանիշը ամենաբարձրն է, քանի որ կենսաթոշակառուները քանակական առումով գերազանցում են երիտասարդներին:
- Ց) Սոցիալական փաթեթից օգտվող սահմանափակ կարողություններով տղամարդկանց թվաքանակը զիջում է ինչպես սոցիալական փաթեթից օգտվող սահմանափակ կարողություններով կանանց, այնպես էլ կենսաթոշակառու տղամարդկանց թվաքանակին:
- Ծ) Կենսաթոշակառու կանանց թվաքանակը գերազանցում է ինչպես սոցիալական փաթեթից օգտվող տղամարդկանց, այնպես էլ կենսապահովման նպաստ ստացող ընտանիքների թվին:

(1) **12. Առաջադրանքում տրված են երիտասարդների կարիքների, մարտահրավերների, հետաքրքրությունների և ռեսուրսների 2020 թվականի հետազոտության արդյունքները:**

- Երիտասարդների 34%-ն ասում է, որ քաղաքացիական ներգրավվածության առումով ակտիվ է կամ շատ ակտիվ, քիչ թե շատ ակտիվ է՝ 41%-ը, ոչ ակտիվ՝ 25%-ը:
- Քաղաքացիական ներգրավվածության առումով ակտիվ կամ քիչ թե շատ ակտիվ լինելու մասին նշողների 37%-ն ասում է, որ մասնակցել է սոցիալական ցանցերում անցկացվող ակտիվություններին և ֆորումներին, 21%-ն ասում է, որ լսել է իրականացրած աշխատանքների վերաբերյալ քաղաքապետի պատրաստած զեկույցը, 17%-ը հայտարարում է, որ հասարակական կազմակերպության անդամ է, 15%-ն իր կարծիքը հայտնել է լրատվամիջոցների (հեռուստատեսություն, ռադիո, ամսագիր-թերթ) միջոցով, 14%-ը նշում է, որ մասնակցել է բնակավայրի ընդհանուր ժողովին, 13%-ը հայտարարում, որ մասնակցել է բողոքի ցույցերի, ևս 13%-ը նշում, որ ստորագրել է խնդրագիրը:
- Երիտասարդների 46%-ը նշում է, որ չի հետաքրքրվում երկրում ընթացող քաղաքական գործընթացներով, 45%-ն ասում, որ հետաքրքրված է քաղաքական գործընթացներով:
- Մոտավորապես յուրաքանչյուր երեք երիտասարդներից մեկը (36%) կարծում է, որ իրենց մունիցիպալիտետի քաղաքականության մեջ հաշվի չեն առնվում երիտասարդների շահերը: Եվս 36%-ը կարծում է, որ իրենց շահերը հաշվի են առնվում, իսկ 28%-ը չգիտի, թե որքանով են հաշվի առնում երիտասարդների շահերը իրենց մունիցիպալիտետի քաղաքականության մեջ:

Տվյալների հիման վրա արված n^o բ եզրակացությունն է ճիշտ:


- ա) Երիտասարդների առավել մեծ մասը հետաքրքրված է քաղաքականությամբ, քան ակտիվ կամ շատ ակտիվ է քաղաքացիական ներգրավվածության տեսանկյունից:
- բ) Երիտասարդներն ավելի ակտիվ են մասնակցում բողոքի ցույցերին, քան սոցիալական ցանցերում անցկացվող քաղաքացիական ակտիվություններին և ֆորումներին:
- գ) Երիտասարդների միայն մեկ քառորդն է հետաքրքրված քաղաքական գործընթացներով, հետևաբար նրանց մասնակցությունը բնակավայրի ընդհանուր ժողովներին ցածր է:
- դ) Երիտասարդների մեծամասնությունը ծանոթ է քաղաքապետի պատրաստած զեկույցին, և նրանց մեծ մասը գտնում է, որ մունիցիպալիտետի քաղաքականությունը հաշվի չի առնում իրենց շահերը:

Հրահանգ

Հաջորդականության սահմանում (№13)

Առաջադրանքում տրված թվարկացանկը դասավորեք նշված սկզբունքի համաձայն:
Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված վանդակներում: Հաշվի առեք, որ վանդակում գրվում է միայն ընտրված պատասխանի համապատասխան թվանշանը:
Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

- (1) 13. Միեման արտացոլում է քաղաքական գաղափարախոսությունների պայտաձև շրջանակը: Դասավորեք գաղափարախոսությունները ձախակողմյանից աջակողմյանի ուղղությամբ:



*5				
----	--	--	--	--





* Աղյուսակում նշված է ճիշտ պատասխանը

Հրահանգ

Համապատասխանության որոշում (№14, 15, 16)

Առաջադրանքում երկու սյունակով տրված է տարբեր տեսակի թվարկացանկ: Որոշեք համապատասխանությունն այս երկու սյունակներում ներկայացված տեղեկատվության միջև: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:


(2) 14. II սյունակում տրված քաղաքական գաղափարախոսությունները համապատասխանեցրե՛ք I սյունակում ներկայացված խորհրդանիշներին.

I. Խորհրդանիշներ		II. Քաղաքական գաղափարախոսություններ
<p>ա)</p> 	<p>ծ)</p> 	<p>1. Ֆաշիզմ</p> <p>2. Պացիֆիզմ</p> <p>3. Ֆեմինիզմ</p> <p>4. Անարխիզմ</p>
<p>ճ)</p> 	<p>զ)</p> 	

(2) **15. II սյունակում տրված պետության ձևերը համապատասխանեցրե՛ք I սյունակում տրված պետության դերին:**

I. Պետության դերը	II. Պետության ձևերը
<p>ս) Սանձել մարդու վարքագիծը և դրանով իսկ թույլ չտալ, որ անհատները վտանգի ենթարկեն այլոց իրավունքները և ազատությունները: Պետությունը պարզապես պաշտպանի դեր է կատարում, նրա հիմնական գործառույթը խաղաղության և սոցիալական կարգ ու կանոնի շրջանակ ստեղծելն է, որի շրջանակներում քաղաքացիները կարող են կարգավորել իրենց կյանքն այնպես, ինչպես իրենք են հարմար համարում:</p>	<p>1. Տոտալիտար պետություն</p>
<p>ծ) Պետությունը միջամտում է տնտեսական կյանքին՝ խթան հաղորդելու արդյունաբերության աճին և արագ տնտեսական զարգացմանը: Սա ենթադրում է ոչ թե անցում պլանային տնտեսության, այլ հիմնական տնտեսական շահերի խմբերի և պետության միջև գործընկերային հարաբերություններ հաստատելու փորձ:</p>	<p>2. Կոլեկտիվացված պետություն</p>
<p>գ) Պետության ինտերվենցիան տնտեսական կյանքում նպատակ ունի վերակառուցել հասարակությունը, ինչն իրականացվում է համաձայն այնպիսի սկզբունքների, ինչպիսիք են ազնվությունը, հավասարությունը և սոցիալական արդարությունը: Պետության ակտիվ դերը կենտրոնացած է ոչ այնքան հարստության կուտակման, որքան հարստության արդար, այսինք՝ հավասար բաշխման վրա:</p>	<p>3. Նվազագույն պետություն</p>
<p>դ) Պետությունը վերահսկում է տնտեսական կյանքի բոլոր ասպեկտները: Տնտեսական համակարգի կենտրոնացված կառավարումն իրականացնում են էկոնոմիկայի նախարարությունը և պլանավորման կոմիտեների ցանցը: Սկզբունքորեն կարևոր է ընդհանուր սեփականության առաջնահերթությունը մասնավոր սեփականության նկատմամբ:</p>	<p>4. Առաջադիմական պետություն</p>
<p>յ) Պետությունը որոշում է հասարակական կյանքի բոլոր ասպեկտները և վերացնում քաղաքացիական հասարակությունը, միաժամանակ խախտելով ցանկացած «մասնավոր» տարածք: Վարչակարգի կենտրոնական հենասյունը տոտալ հսկողության և ահաբեկման քաղաքականությունն է, որտեղ արդյունավետորեն գործում է գաղափարական մանիպուլյացիայի և վերահսկողության համապարփակ համակարգը:</p>	<p>5. Սոցիալ-դեմոկրատական պետություն</p>

- (1) **16. Քարտեզում ներկայացված է 2022 թվականին աշխարհի երկրներում քաղաքացիական իրավունքների պաշտպանության աստիճանը: II սյունակում տրված աստիճանները համապատասխանեցրեք I սյունակում տրված երկրներին.**



Հրահանգ

Մխալի ուղղում (N°17)

Առաջադրանքում տրված է տեքստ, որտեղ թույլ են տրված փաստացի սխալներ (տարեթիվ, տերմին, անուն և այլն): Բացահայտեք և ուղղեք դրանք: Բացահայտած սխալը և դրա ուղղած տարբերակը գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում (սխալը՝ I սյունակում, իսկ ուղղած տարբերակը՝ II սյունակում): Հաշվի առեք, որ յուրաքանչյուր բացահայտված սխալ, իր ուղղված տարբերակի հետ միասին, գնահատվում է 1 միավոր: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

(7) **17. Ուշադիր ընթերցեք տեքստը, գտեք և ուղղեք սխալները.**

Մարդու իրավունքներն ու ազատությունները ժողովրդավարական հասարակությունում

Ժամանակակից ժողովրդավարական պետության հիմնական առանձնահատկություններից մեկն օրենքի առաջ հավասարությունն է: Հենց օրենքի շրջանակներում են յուրաքանչյուր քաղաքացուն տրվում իրավունքներ և ազատություններ, որոնք մարդկային արժանապատիվ կյանքի հիմքն են հանդիսանում: Պետությունում հաստատված ավանդույթներն այն քաղաքական նորմերն են, որոնք որոշում են քաղաքացու և պետության միջև փոխհարաբերությունների հիմնական սկզբունքները: Իրավունքը նշանակում է անձին ընձեռված հնարավորություն՝ գործելու կառավարության հայացքների և շահերի համաձայն, և մյուսներից պահանջելու այդ իրավունքների պաշտպանություն: Ժամանակակից լիբերալ-դեմոկրատական հասարակությունում մարդու իրավունքների պաշտպանությունը հնարավոր է միայն այն դեպքում, եթե քաղաքացիները, սեփական իրավունքների պաշտպանությանը զուգահեռ, ճանաչում, հարգում և պաշտպանում են նաև այլ մարդկանց իրավունքները:

Իրավունքի և ազատության հիմնական տարբերությունն այն է, թե ինչ դեր ունի պետությունը անհատի նկատմամբ: Եթե խոսում ենք իրավունքների մասին, ապա նկատի ունենք պետության պոզիտիվ պարտավորությունը և նրանից ակնկալում արդյունավետ քայլերի ձեռնարկում: Օրինակ՝ կարող ենք վերցնել կրթության իրավունքը, որի հասանելիությունը բոլորի համար պասիվ կերպով պետք է ապահովի պետությունը: Մինչդեռ ազատության մասին խոսելիս ենթադրվում է պետության նեգատիվ պարտավորությունը՝ զերծ մնալ մարդու ազատ գործողությանը միջամտելուց: Որպես դրա օրինակ կարող ենք բերել դավանության ազատությունը:

Անցնել տեքստի երկրորդ էջին

Մարդու իրավունքների զարգացումն ունի դարավոր պատմություն, սակայն կարող ենք առանձնացնել հետևյալ փաստաթղթերը՝ I. Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոնգրեսի կողմից 1761 թվականին ընդունված Անկախության հռչակագիրը, II. 1789 թվականին Անգլիայում հեղափոխության ժամանակ ընդունված Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը: Համարվում է, որ այդ փաստաթղթերը հիմք են հանդիսացել 1948 թվականի դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի համար, որը համարվում է կարևորագույն միջազգային արձանագրությունը:

Վրաստանում Մարդու իրավունքների սահմանադրական պաշտպանության հիմքը դրվել է 1921 թվականի փետրվարի 21-ին Ազգային խորհրդի կողմից ընդունված առաջին սահմանադրությամբ, որն ուժի մեջ էր ընդամենը չորս օր: Նշված սահմանադրությամբ առաջին անգամ հռչակվել է Վրաստանի քաղաքացիների միասնական կամքը օրենքի առջև հավասարության, դասային տարբերությունների բացակայության և մահապատժի վերացման վերաբերյալ: Հաջորդ սահմանադրությունը, որն ընդունվել է արդեն Խորհրդային Վրաստանում 1923 թվականին, իրականում միայն կրկնում էր Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության սահմանադրությունը, այնպես ինչպես 1927, 1937, 1978 թվականների հետևյալ սահմանադրությունները:

Անկախություն ձեռք բերելուց հետո, հիմնվելով Վրաստանում 1921 թվականի սահմանադրության պատմաիրավական ժառանգության վրա, Վրաստանի Հանրապետության խորհրդարանը 1995 թվականին ընդունեց նոր սահմանադրություն, որը հռչակում է Վրաստանի քաղաքացիների ընդհանուր կամքը՝ պաշտպանելու մարդու հիմնական իրավունքները և համապատասխանում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքներին և նորմերին:

[Վերադառնալ տեքստի առաջին էջին](#)

Հրահանգ


Առաջադրանք՝ քաղ վերջավորությամբ (№ 18, 19.2, 19.3, 20, 21, 22, 23.3-23.7)

Ուշադրությամբ ծանոթացեք առաջադրանքի պայմանին: Պատասխանների թերթիկի համապատասխան տեղում գրեք առաջադրանքի պայմանին համարժեք, կոնկրետ, հստակ ձևակերպված պատասխանը: Միավորների առավելագույն քանակը նշված է յուրաքանչյուր առաջադրանքի երկայնքով:

- (4) **18. Առաջադրանքում սխեմատիկորեն ներկայացված են պատմական քաղաքացիական-քաղաքական կարևոր շարժումները: Լրացրե՛ք սխեմայի դատարկ վանդակները.**

Քաղաքացիական-քաղաքական շարժում	Շարժման նպատակները	Կարևոր դեմքեր	Երկիր
Արուիցիոնիզմ	18.1	Ֆրեդերիկ Դուգլաս, Ուիլյամ Լլոյդ Հարիսոն, Ջոն Բրաուն	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
Հակա-ապարտիեյդ	Պայքար ռասայական սեգրեգացիայի դեմ	18.2	Հարավաֆրիկյան Հանրապետություն
Ոչ բռնի շարժում	18.3	Մահաթմա Գանդի	Հնդկաստան
18.4	Պայքար՝ հանուն կանանց ընտրական իրավունքի	Էմմելին Պանկհյորսթ, Լյուսի Սթոուն	Միացյալ Թագավորություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

- (3) 19. Ներկայացված է 2018 թվականի աշխարհի քարտեզն առանց լեգենդի: Քարտեզի վերլուծության հիման վրա պատասխանեք հետևյալ հարցերին.



(1) **19.1 Ի՞նչ է պատկերված տվյալ քարտեզի վրա:**

ա) Ազդեցությունը բնության վրա:

ბ) Քաղաքական վարչակարգերը:

գ) Մամուլի ազատության աստիճանը:

դ) Մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքի ծավալը:

(1) **19.2 Ի՞նչ է նշանակում քարտեզի լեգենդի ամենամուգ երանգը: Անվանե՛ք քարտեզի վրա այս երանգով նշված երեք պետությունները:**


(1) **19.3 Դատողություն արեք պատճառների շուրջ, որոնք պայմանավորում են ձեր նշած երկրներում առկա իրավիճակը:**

(5) **20.** Առաջադրանքում տրված է դպրոցական նախագծի նպատակի, խնդիրների և իրականացման ուղիների ոչ լիարժեք տարբերակը: Դպրոցական նախագծի տրված հատվածին ավարտուն տեսք տալու համար առաջադրանքները կատարեք հետևյալ հաջորդականությամբ.

- I. Որոշեք և գրառեք II խնդիրը, ելնելով աղյուսակում տրված իրականացման ուղիների թվարկացանկից:
(Առաջադրանք 20.2)
- II. Գրեք իրականացման երեք տարբեր ուղի, որոնք կնպաստեն աղյուսակում տրված I խնդրի կատարմանը: *(Առաջադրանք 20.3)*
- III. Որոշեք և գրառեք նախագծի նպատակը, որին հնարավոր է հասնել նախագծի երկու խնդիրների և դրանց իրականացման ուղիներից ելնելով: *(Առաջադրանք 20.1)*

(1) 20.1	<p><u>Նախագծի նպատակը.</u> <i>(Գրեք նպատակը, որին հնարավոր է հասնել տրված խնդիրներից և իրականացման ուղիներից ելնելով):</i></p>
(1) 20.2	<p><u>Նախագծի I խնդիրը.</u> <i>Դպրոցական համայնքի իրազեկում թափոնների կառավարման մասին:</i></p> <p><u>Նախագծի II խնդիրը.</u> <i>(Որոշեք և գրեք կոնկրետ խնդիր, ելնելով II խնդրի իրականացման ուղիներից):</i></p>
(3) 20.3	<p><u>I խնդրի իրականացման ուղիներ.</u> <i>(գրեք տրված խնդրի իրականացման երեք տարբեր ուղիներ):</i></p> <ol style="list-style-type: none"> 1. 2. 3. <p><u>II խնդրի իրականացման ուղիներ.</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Կազմակերպել աշակերտների այցելություն մոտակա անտառային տարածք և մաքրել այն թափոններից: 2. Դպրոցի տարածքում ստեղծել թափոնների տեսակավորման կենտրոն: 3. Կազմակերպել թափոնների երկրորդային կիրառմամբ պատրաստված իրերի ցուցահանդես-մրցույթ:

(4) 21. Ծանոթացեք նկարին և պատասխանեք հետևյալ հարցերին.



- (1) 21.1 Դատողություն արե՛ք, թե որն է նկարի գլխավոր ասելիքը:
- (1) 21.2 Դատողություն արե՛ք, թե ինչ խնդիրներ է առաջացնում այս երևույթը հանրային մակարդակով:
- (2) 21.3 Դատողություն արե՛ք պետության դերի շուրջ այս խնդրի լուծման գործում: Նշեք երկու կոնկրետ քայլ:

(5) **22. Ծանոթացեք տեքստին և կատարեք առաջադրանքը ստորև ներկայացված ցուցումների համապատասխան.**

«Առանց առևտրային սահմանափակումների [...] արմատավորվում է բնական ազատության ամենաակնհայտ և պարզ համակարգը: Յուրաքանչյուր մարդ [...] ազատ է հետապնդելու իր շահերը՝ իր նախընտրած ճանապարհով և իր արդյունաբերությամբ ու կապիտալով մրցակցության մեջ մտնելու այլ մարդկանց հետ:

Կառավարիչն ամբողջովին ազատված է պարտականությունից, որի կատարման փորձն իրականացնելիս նա միշտ պետք է լինի անթիվ պատրանքների ազդեցության տակ և որի պատշաճ իրականացման համար բավական չէ մարդկային ոչ մի իմաստություն կամ գիտելիք: Ազատված է նաև մասնավոր անձանց արդյունաբերությունը վերահսկելու և այն դեպի հասարակության շահերին առավել համապատասխան գործունեություն ուղղորդելու պարտականությունից»:

Ադամ Սմիթ, «Հետազոտություններ ազգերի հարստության բնույթի և պատճառների մասին», 1776 թ.

(1) 22.1 Ելնելով տեքստից որոշեք և անվանեք բանավեճի թեման: Դատողություններ արեք տվյալ տեքստի հետ Ձեր ընտրած բանավեճի թեմայի համապատասխանության մասին:

(4) 22.2 A. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ընթացքում ծագած դիրքորոշումը պաշտպանելու համար:
B. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ընթացքում ծագած դիրքորոշումը հերքելու համար:

(Յուրաքանչյուր փաստարկ պետք է ունենա էապես տարբերվող իմաստ)

(9) **23. Վերլուծեք ներկայացված աղբյուրները և պատասխանեք հետևյալ հարցերին.**

Աղբյուր N1

Նկարի վրա գրված է՝ «Մեկ ազգ, մեկ ռեյխ, մեկ ֆյուրեր»:



Աղբյուր N2



Ստալինը և նրա համակուսակցականները: 1926 թվականին արված լուսանկարը և դրա հետագա տարբերակները:

Անցնել աղբյուրներին՝ [3](#) [4](#) [5](#)

Անցնել առաջադրանքներին՝ [23.1](#) [23.2](#) [23.3-23.7](#)

Աղբյուր N3

«Կառավարող թիմի բացակայությունը հատկապես մոլորեցնող դարձրեց սոտալիտար բռնապետի ժառանգորդի հարցը: Այս հարցը բոլոր ուզուրպատորների համար գլխացավանք է եղել, և միանգամայն հատկանշական է, որ ոչ մի սոտալիտար առաջնորդ երբևէ չի փորձել կիրառել դինաստիա հիմնելու կամ իրենց երեխաներին ժառանգորդ հռչակելու հին մեթոդը: [...] Տոտալիտար պայմաններում, հաղորդափոկների լաբիրինթոսի իմացությունը համարժեք է գերագույն իշխանությանը, և յուրաքանչյուր նշանակաձ փոխարինող, ով իսկապես գիտի կատարվածի էությունը, որոշ ժամանակ անց ինքնաբերաբար հեռացվում է: Փոխարինողին օրինական և երկարաժամկետ նշանակումը կառավարող թիմի առկայությունն է ենթադրում, որի անդամները ևս տիրապետում են առաջնորդի գիտելիքներին այն մասին, թե ինչ է կատարվում, մինչդեռ առաջնորդը դրանից պետք է խուսափի բոլոր հնարավոր միջոցներով: Հիտլերն այդ մասին յուրովի բացատրել է Վերմախտի բարձրագույն ղեկավարությանը, երբ նրանք պատերազմի լարվածակետին խառնաշփոթի մեջ գլուխ էին ջարդում այս հարցի (փոխարինողի) շուրջ. «Ի վերջո, առանց համեստության, ես պետք է ինքս ինձ անփոխարինելի անվանեմ: Ռայխի ճակատագիրը միայն ինձնից է կախված»:

Հաննա Արենդտ, «Տոտալիտարիզմի ծագումը», 1951 թ.

Աղբյուր N4

«Բուրգի գագաթին Մեծ Եղբայրն է: Մեծ եղբայրն անսխալական է ու ամենակարող: Ցանկացած հաջողություն, ցանկացած ձեռքբերում, ցանկացած գիտական հայտնագործություն, ողջ իմացությունը, ողջ իմաստությունը, ողջ երջանկությունը, ողջ արժանիքը բխում է անմիջաբար նրա ղեկավարությունից ու ոգեշնչմամբ: Ոչ ոք երբեք չի տեսել Մեծ Եղբորը: Նրա դեմքը պատկերված է ազդագրերի վրա, ձայնը լսվում է հեռեկրանից: Կարող ենք վստահ լինել, որ նա երբեք չի մահանա, և արդեն զգալի անորոշություն կա, թե երբ է նա ծնվել: Մեծ Եղբայրը կերպար է, որին ընտրել է կուսակցությունը՝ արտաքին կամ ներքին աշխարհին իրեն ներկայացնելու համար: Նրա գործառույթն է ծառայել որպես կենտրոնացնող կետ սիրո, վախի ու մեծարանքի համար՝ զգացմունքներ, որոնք ավելի հեշտ կարելի է տաճել անհատի, քան կազմակերպության հանդեպ»:

Ջորջ Օրուել, «1984», 1949 թ.

Աղբյուր N5

«Ընկերներ! Անհատականության պաշտամունքը նպաստեց կուսակցաշինության և տնտեսական աշխատանքներում արատավոր մեթոդների տարածմանը, տեղիք տվեց ներկուսակցական և խորհրդային ժողովրդավարության կոպիտ խախտումների, տարատեսակ այլասերվածությունների, թերությունների կոծկման, իրականության գեղեցկացման: Մեր մեջ շատացել են շողոքորթները, կեղծավորներն ու գովաբանողները:

Անհնար է նաև չտեսնել, որ կուսակցական, սովետական և տնտեսական աշխատողների բազմաթիվ ձերբակալությունների արդյունքում մեր կադրերից շատերը սկսեցին աշխատել զգուշությամբ, առանց ինքնավստահության: Նրանք վախենում էին որևէ նոր բանից, զգուշանում նույնիսկ սեփական ստվերից: Նրանք հազվադեպ էին նախաձեռնություն ցուցաբերում:

Վերցնենք, թեկուզ կուսակցական ու խորհրդային մարմինների որոշումները: Դրանք պատրաստվում էին ըստ կադապարի՝ ամբողջովին անտեսելով կոնկրետ հանգամանքները: Բանն անգամ հասավ նրան, որ ցանկացած հարցի քննարկման ժամանակ նույնիսկ ամենափոքր հանդիպումների ընթացքում կուսակցության կամ այլ աշխատակիցների ելույթները ընթերցվում էին ըստ «շպարգալկա»-ի: Այս ամենը ստեղծում էր կուսակցական ու խորհրդային գործունեության տկարացում, ապարատի բյուրոկրատացման վտանգ»:

Նիկիտա Խրուշչովի գաղտնի զեկույցը, ԽՄԿԿ XX համագումար, 1956 թ.:

(1) **23.1 Ըստ Հաննա Արենդտի տեքստի՝**

- ա) նույնիսկ տոտալիտար համակարգում որոշումների ընդունումն իրականացվում է յուրօրինակ թիմի կողմից,
- ծ) ցանկացած ուզուրպատոր իշխանություն ձեռք բերելուց հետո փորձում է փոխանցել այն ժառանգաբար,
- զ) տոտալիտար առաջնորդին ամենից շատ մտահոգում է իրեն փոխարինող նշանակելի հասկություններով իրեն նման անձին,
- զ) բռնապետական համակարգերում իշխանությունը մեծանում է գիտելիքի հետ միասին, և, հետևաբար, չպետք է լինի մեկը, ով գիտի այնքան, որքան առաջնորդը, քանի որ դա կնշանակի նրա իշխանության բաշխում:

(1) **23.2 Ջորջ Օրուելի տեքստի համաձայն՝ Մեծ Եղբայրը՝**

ս) մտացածին անձ է, որին վերագրում են ամենակարողության հատկանիշները:

ծ) իրականում անմահ մարդ է, որը ծնվել է կառավարելու համար:

ց) ժողովրդավարական պետությանը բնորոշ կառավարչի նախատիպ է:

ճ) պոպուլիստ քաղաքական առաջնորդ է, ով ժողովրդականություն է ձեռք բերում ժողովրդի հետ շփվելով:

Անցնել աղբյուրներին՝ [1-2](#) [3](#) [4](#) [5](#)

Անցնել առաջադրանքներին՝ [23.1](#) [23.3-23.7](#)

- (1) 23.3 N5 աղբյուրի համաձայն՝ դատողություն արեք, թե ինչ խնդիր է ստեղծում պետության ռեպրեսիվ ապարատի ուժեղացումը պետության գործունեության համար:
- (1) 23.4 N4 աղբյուրի համաձայն՝ դատողություն արեք, թե ինչ քաղաքական գործառույթ է կատարում հիերարխիայի գլուխ կանգնած «Մեծ Եղբայրը»:
- (1) 23.5 Դատողություն արեք N2 աղբյուրում ներկայացված խնդրի շուրջ և բացատրե՛ք այն՝ կիրառելով N3 աղբյուրը:
- (2) 23.6 Կիրառելով N1 աղբյուրը՝ քննարկեք երկու հնարավոր խնդիրները, որոնք ծագում են անհատին մի ամբողջ ազգի հետ հավասարեցնելու արդյունքում:
- (2) 23.7 Դատողություն արեք, թե ինչ ազդեցություն է գործում անձի պաշտամունքի խորհրդային փորձը այսօրվա Վրաստանի վրա: Դատողություն արեք, թե ինչ մեխանիզմներ կան ժողովրդավարական պետությունում այս ազդեցությունը վերացնելու համար: